ՀԴՏ 93/94

# ՄԻՔԱՅԵԼ ԲԱՐՍԵՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆՉԵՎ ԽՈՐՀՐԴԱ-ՖԻՆՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

**Վրեժ Հարությունյան**
**պ.գ.թ.**
**Մեսրոպ Մաշտոց Համալսարան**
**ԿԳՍ նախարարություն**
**Արցախ**

***Անոտացիա***

*Խորհրդային պետության պաշտպանության, բանակի կայացման, հրետանու հզորացման գործում անգնահատելի գործունեություն է ծավալել Միքայել Արտեմի Բարսեղովը, ում կյանքի մեծ մասը անցել էր ռազմաճակատներում: Նա ծնվել է Արցախ աշխարհի լեռնային գյուղերից մեկում՝ Կոլխոզաշենում: Դեռ 12 տարեկան հասակում թողնում է հայրենի գյուղը, հաստատվում Միջին Ասիայում՝ կատարելով ծանր աշխատանքներ: Տասնվեց տարեկանում մասնակցել է Առաջին աշխարհամարտին, այնուհետ անդամակցել կոմունիստական կուսակցությանը և պայքարել Խորհրդային Ռուսաստանի թշնամիների դեմ Միջին Ասիայում: Այստեղից էլ սկսվել է Բարսեղովի զինվորական ուղին: Մինչև 1936 թ. զբաղեցրել է զինվորական տարբեր պաշտոններ, ստացել հրետանավորի փայլուն կրթություն՝ ավարտելով նաև Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան: 1937 թ. նշանակվել է Լենինգրադի զինվորական օկրուգի հրետանու պետի պաշտոնում գնդապետի զինվորական կոչումով: Նրա անմիջական մասնակցությամբ ու ջանքերով է ձևավորվել Լենինգրադի օկրուգի հրետանին, որը հետագայում մեծ դեր է խաղացել Երկրորդ համաշխարհային պատերազմում Խորհրդային Միության հաղթանակի գործում:*

Միքայել Բարսեղովն անցել է մարտական փառավոր ուղի՝ շարքային զինվորից հասնելով գեներալ-գնդապետի աստիճանի: Նախապատերազմյան տարիներին նա մեծ ուժ ու եռանդ է ներդրել զինված ուժերի կազմավորման ու ամրապնդման համար: Նրա խիզախությունը, արիությունը և ռազմական վարպետությունը վառ կերպով դրսևորվեցին Մեծ Հայրենականի ժամանակ, նա եղավ հավատարիմ, ազնիվ և բացարձակապես հետևողական: Նրա ամբողջ կյանքն արժանի է ընդօրինակման:

**Խորհրդային Միության մարշալ՝ Հ. Բաղրամյան**
**Հրետանու մարշալ՝ Կ. Կազակով**

Միքայել Արտեմի Բարսեղովը ծնվել է 1899 թ. հունիսի 15 - ին Արցախի Մարտունու շրջանի Մաշադիշեն (այժմ՝ Կոլխոզաշեն) գյուղում[1]: Այն ժամանակ Մաշադիշենը ընդգրկված էր Ելիզավետպոլի նահանգում, Շուշիի գավառում[2]: Միքայելի հայրը՝ Արտեմը, բրուտագործ վարպետ էր և ուներ սեփական արհեստանոց, իսկ մայրը տնային տնտեսուհի էր: Նրանք երկուսն էլ մահացել են մինչև հոկտեմբերյան հեղափոխությունը: Բարսեղովը ունեցել է երկու խորթ եղբայր և մեկ հարազատ քույր: Ցավոք, քույրը կյանքից շուտ է հեռացել՝ դեռևս 1911 թ.: 1923 թ. մահացել է խորթ եղբայրներից մեկը, իսկ մյուս եղբայրը բնակվում էր Խորհրդային Թուրքմենստանում, որի հետ Միքայելը կապ չէր պահպանում[3]:

Միքայել Բարսեղովը սովորել է հարազատ գյուղի տարրական դպրոցում[4], իսկ 1909-1911 թթ. սովորել է հարևան Մուշկապատ գյուղում: Սակայն 12 տարեկան հասակում,

սոցիալական վատ վիճակից ելնելով, ստիպված էր հեռանալ հարազատ ընտանիքից և հայրենի գյուղից՝ աշխատանք փնտրելու նպատակով: Նա բնակվում էր Միջին Ասիայում՝ Անդիջան քաղաքում, որտեղ 1911 թ. ապրիլից մինչև 1916 թ. սեպտեմբերը աշխատել է «Лесной склад» անտառային ընկերությունում և «Беш-Бош» կոչվող բամբակազտիչ գործարանում որպես բանվոր:

Ընթացող աշխարհամարտը չէր կարող անտարբեր թողնել պատանի Բարսեղովին: Նա այդ ժամանակ ապրում էր Անդիջանում, երբ մի օր քաղաք է գալիս Կովկասյան ռազմաճակատի մասնակից Գարեգին Տեր-Ակոպովը և պատմում Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող կոտորածների մասին: Հավաքվել էր հոծ բազմություն, ու հանկարծ Բարսեղովը բարձրանում է բեմ և ասում, որ անհրաժեշտ է զենք վերցնել ու կռվել թուրքերի դեմ. հայը չի կարող անտարբեր գտնվել հայրենակիցների ճակատագրի նկատմամբ, հարկավոր է թուրքերին կանգնեցնել:

Եվ 1916 թ. Բարսեղովը երեսուն հայ կամավորների հետ մեկնում է ռազմաճակատ ու մասնակցում առաջին համաշխարհային պատերազմին: Նա Կովկասյան ճակատի ռազմական գործողություններին մասնակցել է 1916 թ. կեսերից մինչև 1917 թ. նոյեմբերը[5]. կռվել է 39-րդ հրետանային բրիգադի 2-րդ առանձին Կովկասյան կորպուսի շարքերում որպես մարտկոցի շարքային հրամանատար[6]:

Սպա Հայկ Հայրապետյանը, որը նույնպես սովորել է Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայում, իր հուշերում պատմում է, թե ինչպես է ընդունելության քննության ժամանակ հանդիպել ու ծանոթացել գեներալ-գնդապետ Միքայել Բարսեղովի հետ, որը եղել է հանձնաժողովի անդամ: Բարսեղովը նրան պատմել է դրվագներ իր կյանքից, որը Հ. Հայրապետյանը տպագրել է «Սովետական Հայաստան» ամսագրում[7]: Այստեղից իմանում ենք, որ Բարսեղովը մեկ ամիս Թիֆլիսում զինվորական գործ էր սովորում, որտեղից տեղափոխվում է ռազմաճակատ՝ Երզնկայի ուղղությամբ: Երզնկայում Բարսեղովը ականատես է լինում հայերի կոտորածներին, տեսնում է ավերված ու հրի մատնված տներ: Երզնկայից նրանց անձնակազմը շարժվում է դեպի Կարին ու ճանապարհին միանում Սեբաստացի Մուրադի ջոկատին: Բարսեղովը մեծ հիացմունքով է խոսում ժողովրդական հերոսի մասին, որի ջոկատում նշանակվում է հրանոթային անձնակազմի հրամանատար: Ռուսական զորքը հեռացել էր ռազմաճակատից՝ հայերին թողնելով միայնակ: Ստեղծված իրավիճակում հայ կամավորականները կազմակերպում են փախստականների նահանջը դեպի Արևելյան Հայաստան: Կարսի մոտ Միքայել Բարսեղովը ծանր վիրավորվում է, ութ օր հոսպիտալացվում Ալեքսանդրապոլում ու Թիֆլիսում[8]: Վիրավորվելուց հետո զորացրվում է բանակից:

Այսպիսով՝ 1916 թ. մինչև 1917 թ. նոյեմբերը Միքայել Բարսեղովը մասնակցում է առաջին համաշխարհային պատերազմին, դառնում ջոկի հրամանատար, արժանանում Գեորգիևյան երկու շքանշանի:

Բանակից զորացրվելուց հետո Բարսեղովը կրկին հաստատվում է Անդիջանում, սկսում աշխատել բամբակազտիչ գործարանում: Հոկտեմբերյան հեղաշրջումով, երբ իշխանությունը իրենց ձեռքն են վերցնում բոլշևիկները, սկսվում է ռուսական քաղաքացիական պատերազմը: 1918 թ. Բարսեղովը կամավոր զենք է վերցնում, անդամակցում կարմիր բանակին ու մասնակցում Միջին Ասիայում բասմաչների դեմ պայքարին[9]: Հենց այստեղից է հիմնականում սկսվել Միքայել Բարսեղովի՝ Խորհրդային սոցիալիստական պետության պաշտպանությանն ուղղված մարտական գործունեությունը: Քաղաքացիական պատերազմի տարիներին նա մասնակցել է Անդիջանի ամրոցի, Կոկանդի, Նամագանի, Ֆերգանայի, Սկոբոլեի մարտական գործողություններին[10], որտեղ փայլուն են դրսևորվել Բարսեղովի ռազմական տաղանդն ու

կազմակերպչական ունակությունները: Այստեղ նա մարտնչում էր սպիտակ գվարդիականների, բասմաչների հրոսակախմբերի, խորհրդային պետության բոլոր թշնամիների դեմ: Բարսեղովը նշանակվում է մարտկոցի հրետանային դասակի հրամանատար: Ապրիլին նրա մարտկոցը մտնում է հայ ժողովրդի մեկ այլ լեգենդար զավակ Հայկ Բժշկյանցի կարմիր գվարդիայի Սամարղանդյան միացյալ ջոկատի կազմը[11]: Շուտով նրանք գրոհում են Բուխարայի էմիր Սեիդ Ալիմի դիրքերի վրա: Էմիրը դիմում է փախուստի: Կռիվներից մեկի ժամանակ Բարսեղովը վիրավորվորվում է: Ապաքինվելուց հետո նշանակվում է մարտկոցի հրամանատար արցախցի Հակոբ Մելքումովի բրիգադում: Ի դեպ, հենց Հակոբ Մելքումովի հրամանով Բարսեղովը ընդունվում է Տաշքենդի հրետանային ուսումնարանը: Այստեղ նա սովորում է 1920-1922 թթ.[12]:

Քաղաքացիական պատերազմի վերջում Բարսեղովը ուներ մարտկոցի հրամանատարի պաշտոն: Ավարտելով տաշքենդյան ուսումնարանը՝ նա ծառայության է անցնում Պետրոգրադի զինվորական օկրուգում որպես դասակի հրամանատար[13]:

1923-1925թթ. Միքայել Բարսեղովը ծառայել է Պետրոգրադի զինվորական օկրուգի ստորաբաժանումներում որպես հրետանու հաշվարկի հրամանատար (ք. Լուգա), կապի պետ, մարտկոցի հրամանատարի օգնական, որից հետո տեղափոխվել է միջինասիական զինվորական օկրուգի Գարջուն քաղաք որպես քիմիական ծառայության պետ, այնուհետ՝ մարտկոցի հրամանատար[14]:

Բարսեղովը 1925 թ. սեպտեմբերին Պետրոգրադի օկրուգի Պուշկին քաղաքում մասնակցել է հրամանատարական կազմի կատարելագործման հրետանային դասընթացներին[15]: Այն ավարտելով 1926 թ. հոկտեմբերին[16]՝ տեղափոխվել է միջինասիական զինվորական օկրուգ և ծառայության անցել Գարջունում տեղակայված զորամասում որպես ուսումնական մարտկոցի հրամանատար: 1928-30 թթ. նույն զորամասում եղել է դիվիզիոնի, իսկ մի քանի ամիս՝ ուսումնական դիվիզիոնի հրամանատար: Այդ տարիներին Բարսեղովը որոշ ժամանակ ծառայել է նաև Կազան և Պերմ քաղաքներում տեղակայված զորամասերում որպես հրետանային ստորաբաժանման հրամանատար[17]:

Խորհրդային հրամանատարությունը, գնահատելով Բարսեղովի ռազմական տաղանդը, զինվորական հմտություններն ու փորձը, 1930 թ. օգոստոսին նրան նշանակում է մերձվոլգյան զինվորական օկրուգի առանձին հրետանային դիվիզիոնի հրամանատար: Իսկ 1931 թ. Բարսեղովը ղեկավարում էր ուրալյան 57-րդ հրետանային գունդը: Այստեղից էլ սկսվում է Բարսեղովի կյանքի զինվորական վերելքը: Շուտով նրա ղեկավարությամբ 57-րդ գունդը մեկնում է Մոնղոլիայի Ժողովրդական Հանրապետության սահմանը հսկելու[18]:

Մինչ այդ Միքայել Բարսեղովը ամուսնանում է, կազմում ընտանիք՝ միաժամանակ շարունակելով ծառայությունը խորհրդային զորքերում: Նրա կինը՝ Եվգենյա Մարկովնա Պարսեղովան, ծնվել էր 1905 թ. միջինասիական Գարամովա քաղաքում՝ արմատներով կարաբուլախցու (գյուղ Արցախում, այժմ՝ Ակնաղբյուր) ընտանիքում[19]: 1927 թ. ծնվում է նրանց առաջնեկը՝ Ռիման, իսկ 1935 թ.–ին՝ Լիդիան:

Գնդի հրամանատարի պաշտոնում նշանակվելուց հետո Բարսեղովին անհրաժեշտ էր կատարելագործել ռազմական գիտելիքները, ստանալ բարձրագույն սպայական ակադեմիական կրթություն: Խորհրդային բանակին նույնպես անհրաժեշտ էին բարձրագույն կրթությամբ պատրաստի կադրեր, մանավանդ Բարսեղովի նման կադրեր, ովքեր անցել էին մարտական փայլուն ճանապարհ և կարող էին իրենց ավանդը բերել բանակի կայացման ու հզորացման գործում: Առավել ևս, երբ գնալով միջազգային դրությունը սրվում էր, ու պատերազմի դեպքում պետք էին գալու հմուտ, տաղանդաշատ զորավարներ, ովքեր կարող էին իրենց անցյալի փորձը

կիրառել: Եվ ահա 1932 թ. Բ. Մ. Շապոշնիկովի երաշխավորությամբ Մ. Բարսեղովը մեկնում է Մոսկվա՝ ուսանելու Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայում: Ակադեմիայում Մ. Բարսեղովը ձեռք է բերում տեսական խոր գիտելիքներ, ավելի խորը ուսումնասիրում ռազմական գործը, պաշտպանում դիպլոմային աշխատանք՝ «Թեթև և ծանր հրետանու հարաբերակցությունը 1914-18 թթ. պատերազմի սկզբին» թեմայով: Նա դառնում է լավ պատրաստված հրետանավոր ու 1933 թ. պետության կողմից պարգևատրվում «Կարմիր դրոշ» շքանշանով[20]:

Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան Մ. Բարսեղովը ավարտում է 1936 թ. ոսկե մեդալով[21]: Այդ տարիներին նույն ակադեմիայում էր սովորում նաև Խորհրդային միության ապագա մարշալ, հայ ժողովրդի մեկ այլ փառապանծ զավակ Հովհաննես Բաղրամյանը, ով Բարսեղովի մասին այսպես է արտահայտվել. «Նրա կյանքի ուղին զարմանալիորեն նման էր կարմիր բանակի խոշոր զորապետների մեծամասնության կյանքի ուղուն: Նա իր «համալսարանները» անցկացրել էր կարմիր բանակում: Համընդգրկող միտքը և բացառիկ հիշողությունը նրան օգնեցին լավ հրետանավոր դառնալ»[22]:

Նույն՝ 1936 թ. մայիսին Բարսեղովին նշանակում են լենինգրադյան ռազմական օկրուգի 69-րդ կորպուսի հրետանային գնդի հրամանատար, իսկ 1937 թ. օգոստոսին՝ Լենինգրադի զինվորական օկրուգի հրետանու պետ[23]: 1938 թ. փետրվարից նշանակվում է բրիգադի հրամանատար, իսկ 1939 թ. նոյեմբերի 5-ից՝ դիվիզիայի հրամանատար Լենինգրադի զինվորական օկրուգում: Մեծ են նրա ծառայությունները Լենինգրադի ռազմական օկրուգի հրետանային զորամասերի ստեղծման, ամրապնդման, հրամկազմի պատրաստման գործում: Դրա համար էլ ղեկավարությունը 1938 թ. փետրվարի 22-ին Բարսեղովին պարգևատրում է «XX лет РККА» մեդալով[24]:

Միքայել Բարսեղովը, ընտրելով զինվորականի ուղին, բնական է, չէր կարող մասնակցել քաղաքական գործընթացներին: Բացի այդ, նա աշխատանքի բերումով անընդհատ փոխում էր բնակության վայրը: Քանի որ Խորհրդային միությունում գործում էր կոմունիստական կուսակցության մենիշխանությունը, բոլոր նշանավոր անձինք մտնում էին կուսակցության շարքերը, որպեսզի հետագայում կարողանան ստեղծել իրենց կարիերան: Դեռևս 1918 թ. նոյեմբերին Անդիջանում Միքայել Բարսեղովը դարձել էր կոմունիստական կուսակցության անդամ, իսկ 1920 թ.-ից՝ կուսակցական բյուրոյի անդամ[25]: Արխիվային նյութերի և հրապարակում առկա տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Միքայել Բարսեղովը տարբեր քաղաքներում եղել է քաղաքային խորհրդի անդամ, ղեկավարել է կուսակցական լուսավորության դպրոցները բոլոր զորամասերում, այդ թվում՝ Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայում[26]: Դա խոսում է այն մասին, որ նա վայելել է մեծ հարգանք, դրա համար էլ նրան վստահել են նման պաշտոններ: Չէ՞ որ այդ պաշտոնները հիմնականում հասարակական բնույթի են, իսկ հասարակության հետ տարվող աշխատանքները կարող է իրականացնել բնավորության լավ հատկանիշներ ունեցող անձը, իսկ Բարսեղովը հենց այդպիսին էր. «Պարզություն, անկեղծություն, հսկայական ծառայություն հայրենիքի հանդեպ, զինվորի հոգեբանության հոյակապ իմացում, անսահման սեր հրետանու նկատմամբ, կրքոտ հայրենասիրություն և կուսակցականություն՝-այսպիսին են հրետանու գեներալ-գնդապետ Մ. Ա. Բարսեղովի բնավորության գծերը»[27]. այսպես է բնութագրել Բարսեղովին գնդապետ Էլբակիանը:

Բարսեղովը 1929 թ. եղել է Կազանի քաղխորհրդի անդամ, 1930 թ.-ին՝ Կամենկա-Բելինսկյան շրջկոմի անդամ, 1931 թ.-ին՝ Պերմի քաղխորհրդի անդամ, 1937-38 թթ.-ին՝ լենինգրադյան զինվորական օկրուգի քաղբյուրոյի անդամ[28]:

Երբ 1939 թ. սկսվում է Երկրորդ համաշխարհային պատերազմը, Բարսեղովը լենինգրադյան զինվորական օկրուգի հրետանու պետն էր՝ շատ կարևոր մի պաշտոն նման լայնամասշտաբ պատերազմի ժամանակ, առավել ևս, երբ հաշվի ենք առնում Լենինգրադի ռազմավարական նշանակությունը Խորհրդային միության համար: Սա խոսում էր Բարսեղովի բացահայտ հեղինակության, ռազմական տաղանդի, իշխանությունների կողմից վստահություն վայելելու մասին: Իր նվիրվածության, աշխատասիրության, տքնաջան աշխատանքի շնորհիվ Բարսեղովը շարքայինից հասել է մինչև գնդապետի զինվորական աստիճանի:

Այսպիսով՝ մեծ էր Միքայել Բարսեղովի ավանդը խորհրդային զորքերի, հատկապես հրետանու կայացման, հզորացման գործում, նշանակալից էր նրա ներդրումը քաղաքացիական կռիվների հաղթանակի մեջ: Կարող ենք փաստել, որ Բարսեղովը մասնակցեց առաջին աշխարհամարտին, քաղաքացիական կռիվներին, միջինասիական բասմաչների դեմ խորհրդային ուժերի պայքարին՝ ձեռք բերելով ռազմական մեծ փորձ, ստանալով զինվորականի՝ ժամանակի առումով փայլուն կրթություն, որը նրան հետագայում օգնեց հասնել ավելի մեծ հաղթանակների կերտման, ավելի մեծ կոչումների:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. ՀԱԱ, ֆ. 688, ց. 5, գ. 33, թ. 1:
2. Նույն տեղում, թ. 6:
3. Նույն տեղում, թ. 17:
4. Հայազն Տ., Ղազարյան Գ., 1000 հայազգի գեներալներ, ծովակալներ, Եր., 2009, էջ 386:
5. Вирабян А., Знаменитые арцахцы, Арцах (Карабах), Утик, книга первая, Ер., 1992, ст. 57.
6. ՀԱԱ, ֆ. 688, ց. 5, գ. 33, թ. 10:
7. Հայրապետյան Հ., Միքայել Բարսեղովի չորս պատերազմը, «Սովետական Հայաստան», Եր., 1985, թ. 5, էջ 15-17:
8. Նույն տեղում:
9. Ռ. Հ., Հրետանու գեներալ-գնդապետ Միխայիլ Պարսեղով: «Մշակույթ», 2013, մայիս-հունիս, էջ 11:
10. Բաղդասարյան Ա., Նրա ամբողջ կյանքն ընդօրինակման նմուշ է, «Ազատ Արցախ», 1999, 14 հոկտեմբերի, էջ 3:
11. Հայրապետյան Հ., Միքայել Բարսեղովի չորս պատերազմը, «Սովետական Հայաստան», Եր., 1985, թ. 5, էջ 16:
12. Торкунов С., Герой Советского союза М. А. Парсегов (Воспоминания посовместной с ним работе и учебе ), М., 1970, ст. 3.
13. Мкртчян Ш., Михаил Артемович Парсегов (памятка), Степанакерт, 1970, ст. 6.
14. ՀԱԱ, ֆ. 688, ց. 5, գ. 33, թ. 12:
15. Նույն տեղում:
16. Арутюнян К., Участие воинов-армян Нагорного Карабаха и Севернего Арцаха в Великой Отечественной войне Советского Союза(1941-1945), Ер., 2009, ст. 94.
17. Մկրտչյան Շ., Ականավոր զորահրամանատարը, Սովետական Ղարաբաղ, 15 հուլիսի, 1969, թ. 164, էջ 3:

18. Торкунов С., Герой Советского союза М. А. Парсегов (Воспоминания посовместной с ним работе и учебе ), М., 1970, ст. 3.
19. ՀԱԱ, ֆ. 688, ց. 5, գ. 33, թ. 7: Թեև արխիվային նյութերում նշվում է, որ Բարսեղովի կինը՝ Եվգենյան, արմատներով Արցախի Կարաբուլախ գյուղից է, սակայն մեր կարծիքով դա այդպես չէ, որովհետև Պետերբուրգի Բոգոսլավյան գերեզմանատանը գտնվող Բարսեղովի հուշարձանի վրա Բարսեղովի անվան կողքին փորագրված է նաև Իզաբելլա Պողոսովնա Պարսեղովայի (1917-1993թթ.) անունը: Հավանական է, որ Իզաբելլան է եղել արցախցի, դա է փաստել նաև Կարաբուլախ գյուղի 93-ամյա բնակիչ Նիկոլայ Մանուչարյանը, որի հետ մենք անձամբ ենք հանդիպել 2018 թ. ապրիլին: Նա պնդում է, որ իրենց համագյուղացի Ջիվանշիրյան Պողոսի աղջիկը եղել է Բարսեղովի երկրորդ կինը: Բարսեղովը Իզաբելլայից երեխաներ չի ունեցել, բայց կյանքի մեծ մասը նրա հետ է անցկացրել: ՀԱԱ-ի այդ տվյալները 1961 թ. Բարսեղովն անձամբ է գրել և ուղարկել պատմաբան Արմո Մալխասյանին, որը գրել էր գիրք՝ «Սովետական բանակի հայ գործիչներ» վերնագրով: Հավանական է, որ Բարսեղովը չի ցանկացել, որպեսզի այդ մասին իմանան, դրա համար էլ կեղծել է այդ տվյալները: Ցավոք, դեռևս չենք կարողացել կապ հաստատել Բարսեղովի հարազատներից մեկի հետ ու պարզել այդ ամենը:
20. Միքայել Բարսեղովի անվան թանգարանի ցուցանմուշ:
21. Ղազարյան Ա., Պատերազմ, մարդիկ, ճակատագրեր, հ. 1, Եր., 1975, էջ 47:
22. Բաղրամյան Ի., Այսպես է սկսվել պատերազմը, Եր., 1975, էջ 106:
23. ՀԱԱ, ֆ. 688, ց. 5, գ. 33, թ. 13:
24. Мкртчян Ш., Михаил Артемович Парсегов (памятка), Степанакерт, 1970, ст. 11.
25. ՀԱԱ, ֆ. 688, ց. 5, գ. 33, թ. 18:
26. Նույն տեղում:
27. Միքայել Բարսեղովի անվան թանգարանի ցուցանմուշ:
28. ՀԱԱ, ֆ. 688, ց. 5, գ. 33, թթ. 11, 18:

**РЕЗЮМЕ**

**Деятельность Михаила Барсегова до советско-финской войны**

**Вреж Арутюнян**

В деле зашиты Советского государства, в становлении армии, в укреплении артиллерии неоценима роль Михаила Артемовича Барсегова, большая часть жизни которого прошла на фронте. Он родился в одном из горных селений Арцаха- в Колхозашене. Уже в возрасте 12 лет он переехал из родного села в Среднюю Азию, где занимался непосильным трудом. В возрасте 16 лет Барсегов участвовал в первой мировой войне, затем вступил в ряды коммунистической партии и боролся с врагами Советской России В Средней Азии. Так и начинался путь военнослужащего Барсегова. До 1936 года он занимал разные военные должности, получил блестящее образование артиллериста, закончив военную академию имени Фрунзе. В 1937 году его назначают начальником артиллерии Ленинградского военного округа в звании полковника. При его непосредственном участии и его усилиями была сформирована артиллерия Ленинградского округа, которая в дальнейшем сыграла ключевую роль в победе Советского Союза во II мировой войне.

**SUMMARY**

**On Michael Barsegov's aActivity before the Soviet-Finnish War**

**Vrezh Harutyunyan**

Michael Barsegov, who spent most of his life on the front, was greatly engaged in activities of the Soviet Union's defence, in army building and artillery strengthening. He was born in Kolkhozashen, a mountanious village in Artsakh. At the age of 12 he left his village for Middle Asia where he worked hard to survive. At the age of 16 he participated in World War I, later joined the Communist party and fought against the enemies of Soviet Russia in Middle Asia. From here his military career began. Up to 1936 he occupied different military posts, got brilliant education in artillery in Millitary Academy after Frunze. In 1937 he was appointed Artillery head in Leningrand millitary district with colonel's rank. With his direct involvement and efforts Leningrand district artillery was formed, which later played a major role in the victory of the Soviet Union in the World War II.